

7056

3K112

7-22

КПЗ

2-22

47.

23 SEP 2006

1 DEC 2009

ՀԱՄ.Կ. (Բ.) Կ. Կ. Կ.-ի ՅԵՎ Կ. Վ. Հ.-ի  
ՀՈՒՆՎԱՐՅԱՆ (1933 Թ.) ՊԼԵՆՈՒՄԻ  
ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

ԿՈՒՍԴՐԱՑ



ՅԵՐԵՎԱՆ

2710  
38

Տնօրենական խմբագիր՝ Մ. Նֆրիկ  
 Սրբազան Ա Տեր-Մկրտչյան  
 Հանձնված և արտագրության 23 հունվարի 1933թ.  
 Ստորագրված և տպագրելու 27 հունվարի 1933թ.  
 Ցիտավ 10000 Հրատ Ա 75,92,000 տոմ

Պատրաստի տպարան, Պատվեր № 213, Կլավիր № 7709 (P)

## ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ 1933 ԹՎԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԼԱՆԸ

ՀԱՄ-Կ(Բ)Կ ԿԿ-Ի ՅԵՎ ԿՎԶ-Ի ՄԻԱՅՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵՎԸ ԸՆԿ. ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ,  
 ՄՈԼՈՏՈՎԻ ՅԵՎ ԿՈՒՅԲՈՇԵՎԻ ԶԵԿՈՒՅՍԱՆ ԱՌԹԻՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ  
 1933 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10 ԻՆ

### I. ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վորպես արդյունք ինդուստրացման քաղաքականության ան-  
 շեղ կիրառման և ամբողջ ճակատում կատարվող սոցիալիստական  
 ծավալուն արշավի, ԽՍՀՄ-ի բանվոր դպակարդը, բայցևիկյան  
 կուսակցության ղեկավարությամբ, հաջողությամբ իրագործեց  
 հնգամյակի հիմնական խնդիրը՝ ստեղծեց սեփական առաջավոր  
 տեխնիկական բազա ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիա-  
 լիստական վերակառուցման համար:

Կապիտալիստական յերկրների եկոնոմիկայի քայքայման պայ-  
 մաններում, յերբ աննախընթաց չափով աճել և այլ յերկրներում  
 դործադրվելուց, աղքատությունը և սովը, ԽՍՀՄ-ում հնգա-  
 մյակի կատարումը վոչ թե հինգ, այլ չորս տարում (ավելի ճիշտ՝  
 չորս տարի և յերեք ամսում) ամենից ավելի աչքի ընկնող փաստն  
 և ժամանակակից պատմության մեջ:

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՃՈՒՆ ՎԵՐԵԼՔԸ ԽՍՀՄ-ՈՒՄ  
 ԱՊԹԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՀԴՆԱԺԱՄԻ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱ-  
 ԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Առաջին հնգամյակի շրջանում ստեղծվեց արդյունաբերության,  
 տրանսպորտի ու գյուղատնտեսության վերակառուցման սեփական  
 ինդուստրիալ բազա:

Հետամնաց մանր գյուղական յերկրից, վորպիսին էր

հին Ռուսաստանը, ԽՍՀՄ-ն առաջ անցնող տեխնիկական տնտեսա-  
կան տեսակետից ամենազարգացած յերկրների առաջին շարքերը:

Աճեցին սև ու գունավոր մետաղաձուլման, քիմիայի ու էներ-  
գետիկայի տիրանները՝ Մագնիտոստրոյը, Կուլնեցկոստրոյը, Ու-  
բալի պղնձի կոմբինատը, Ռիդերսկու բաղամետաղ կոմբինատը,  
Վոլոսովի ալյումինիումի կոմբինատը, Չերնորեչենսկի և Բերեզ-  
նիկի աղտի գործարանները, Դնեպրոստրոյի, Ջուլսկի, Չելյա-  
բինսկի և Շտերովկայի ելեկտրոկայանները, Դոնբասի, Կուզբասի  
և այլ չրջանների հզոր հանքահորերը, խոշոր կրեկինգ գործարան-  
ներ, կոքսի գործարաններ և վերականուցվեցին արդյունաբերու-  
թյան այդ ճյուղերի համարյա բոլոր խոշոր ձեռնարկությունները:

Աճեցին մեքենաշինության, տրակտորաշինության հսկաներ,  
վորոնջ կարող են ամեն տարի միլիոնավոր ձիու ուժ հայթայթել  
գյուղատնտեսությանը, Ստալինգրադի ու Խարկովի տրակտորի  
գործարանները, Պուտիլովի տրակտորի գործարանը, վորը ներկա-  
յումս վերականուցվում է և դառնալու յե մարդատար ավտոմո-  
բիլների գործարան, չուտով գործարկվելու յե ուժեղ թրթռազնաց  
տրակտորների գործարան Չելյաբինսկում: Մավալեց գյուղա-  
տնտեսական բարդ մեքենաների՝ կոմբայների, բարդ կալսիչ մե-  
քենաների, կուլտիվատորների, պիկերների, վուշ գզող մեքենա-  
ների արտադրությունը, աճեց Ռուստովի գյուղատնտեսական մե-  
քենաների գործարանը, Սարատովի կոմբայնի գործարանը, «Կո-  
մունար» գործարանը Ջապրոտիսկյում, «Սերպ ի Մոլոտ» գործա-  
րանը Սարկովում, Լյուբերեցկի գործարանը և այլն:

Մավալեց ավտոմոբիլային արդյունաբերությունը, վորի  
գործարաններից յուրաքանչյուրն ընդունակ է արտադրել ամեն  
տարի ավելի, քան կուտակել էր ցարական Ռուսաստանը տասնյակ  
տարիների ընթացքում ներմուծումով ու սեփական արտադրու-  
թյամբ, Ստալինի գործարանը Մոսկվայում, Մոլոտովի անվան  
գործարանը Դորիկում, ծանր բեռնակիր ավտոմոբիլների գործա-  
րանը Շարոսլավում: Հզոր չողեքարչերի ու վաղոնների արտա-  
դրությունը՝ չողեքարչերի գործարաններ—նոր գործարան Լու-  
գանսկում և վերականուցված գործարան Կալոմենսկում, վաղոնի  
գործարաններ՝ Նիժնիոսդեյում կառուցվող գործարանը, «Պրավ-  
դա»-ի անվան վերականուցվող գործարանը, Կալինինի գործարա-  
նը և այլն: Խոշոր տուրբինների և գեներատորների արտադրու-  
թյունը ելեկտրոկայանների համար՝ «Ելեկտրոսիլա»: Ստալինի

անվան մետաղադործարանը Լենինգրադում, տուրբինի դործարա-  
նը Սարկովում:

Սարքավորման արտադրությունը սև մետաղաձուլման համար  
(դոմնաներ, մարտեններ և մամլիչ դաղդյահներ)—Կրամատորսկի  
գործարանը, «Ուրալմաշտրոյը», Իժորի գործարանը, մետաղա-  
ձուլման սարքավորման գործարանը Դնեպրոպետրովսկում և այլն:  
Սարքավորման արտադրությունը վառելանյութերի արդյունաբե-  
րության համար՝ ուժեղ փորող մեքենաներ ամխի ու նավթի հա-  
մար, կրեկինգներ, ուժեղ լեքեղիաներ և այլն: Գարլովկայի գոր-  
ծարանը, Սիբիրի մեքենաշինական գործարանը, Պադոյսկի կրե-  
կինգի գործարանը, լեյտենանտ Շմիդտի գործարանը Բազվում և  
այլն: Ինքնաթիռների և ավիամոտորների գործարաններ՝ Մոսկ-  
վայում, Դորիկում, Վարոնեժում, Սիբիրում և այլն: Բարդ դաղ-  
դյահաշինություն և գործիքների արտադրություն՝ Մոսկվայում,  
Դորիկում, Վարոնեժում, Սիբիրում և այլն:

Ընդհանուր առմամբ ամբողջ մեքենաշինությունը՝ համեմա-  
տած 1927—28 տարվա հետ, ավելացավ 4—5 անգամ (գերազանցե-  
լով հնգամյակի վերջին տարվա ուրվագծերը 54 տոկոսով), իսկ  
համեմատած միջպատերազմյան չրջանի հետ, մեքենաշինու-  
թյունն ավելացավ տասն անգամ:

Կառուցվեց ամխամետաղաձուլական նոր բազա՝ Ուրալ-Կուլդ-  
բաս:

Այդ բոլորի չնորհիվ՝

ա) Արմատապես փոխվեց արդյունաբերության ու գյուղատն-  
տեսության արտադրանքի փոխհարաբերությունը հոգուն առաջի-  
նի, վորովհետև արդյունաբերության տեսակարար կշիռը 1927—28  
տարվա 48 տոկոսից 1932 թվականին հասավ 70 տոկոսի, գյուղա-  
տնտեսության անշեղ աճման պայմաններում: Իսկ հենց արդյու-  
նաբերական արտադրանքի մեջ արտադրության միջոցների արտա-  
դրումը գերակշռող բնույթ ստացավ, վորովհետև ծանր ինդուս-  
տրիայի արտադրանքի տեսակարար կշիռը 1927—28 տարվա 44,5  
տոկոսից 32 թվականին հասավ 53 տոկոսի, վորով գերակշռեց հրե-  
դամյակի առաջադրանքը 10 տոկոսով:

բ) Արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ համեմատած  
միջպատերազմյան մակարդակի հետ, 1932 թվականին ավելա-  
ցավ 334 տոկոսով, իսկ համեմատած 1928 թվականի հետ՝ 219  
տոկոսով, փոխանակ 234 տոկոսի, վոր նախադրված էր հնգամյա

պլանում, հնգամյակի վերջին՝ 5-րդ տարվա համար՝ համեմատած 1928 թ. մակարդակի հետ: Այդպիսով, ապահովվեց հընդամյա պլանի 5-րդ տարվա ծրագրի կատարումը՝ 93,7 տոկոսով, հնգամյակի 4-րդ տարում (1932 թվականին), իսկ ծանր արդյունաբերության հնգամյակի՝ կատարումը 108 տոկոսով: Ընդհանրապես հնգամյակի կատարման ընթացքին ուղեկցել է ամբողջ արդյունաբերական արտադրանքի տարեկան աճումը միլիոն հաշվով 22 տոկոսով:

դ) Արդյունաբերության մեջ ներդրված հիմնական դուռները չորս տարվա և յերեք ամսվա ընթացքում կազմեցին 23,3 միլիարդ ռուբլի, փոխանակ հնգամյակի ուրվագծած 18,8 միլիարդ ռուբլու հինգ տարվա համար: Այդ կազմում է հնգամյա պլանի 124 տոկոսը: Իսկ հանրայնացված գյուղատնտեսության դժով չորս տարի և յերեք ամսվա հիմնական ներդրումները կազմեցին 9,4 միլիարդ ռուբլի, փոխանակ հնգամյա պլանում հինգ տարվա համար ուրվագծված 7,2 միլիարդ ռուբլու, վոր կազմում է հնգամյա պլանի 130 տոկոսը:

դ) Արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը չորս տարում ավելացավ 38 տոկոսով, վոր մի քիչ հետ է մնում հնգամյակի առաջադրանքներից:

Այդպիսով, ԽՍՀՄ-ն ագրարային յերկրից վերածվեց արդյունաբերական յերկրի, վորն ամրացրեց յերկրի տնտեսական անկախությունը, վորովհետև ԽՍՀՄ-ն եմարավորություն ստացավ անհրաժեշտ սարքավորման վնական մասն արտադրել իր սեփական ձեռնարկությամբ:

Կատարելապես այլ պատկեր է ներկայացնում արդյունաբերության դրությունը կապիտալիստական յերկրներում:

Մինչդեռ ԽՍՀՄ-ում վիթխարի չափով աճեց արդյունաբերությունը, կապիտալիստական յերկրներում տիրում է դաժան ճգնաժամ և արդյունաբերական արտադրության կատաստրոֆիկ անկում: ՀԱ Միացյալ Նահանգներում արդյունաբերական արտադրությունը՝ համեմատած 1928 թվականի հետ, իջել է 44 տոկոսով, Գերմանիայում՝ 45 տոկոսով, Ֆրանսիայում՝ 25 տոկոսով, Անգլիայում՝ 20 տոկոսով, Լեհաստանում՝ 46 տոկոսով: Այդ հանգամանքը 3—4 տասնամյակով հետ մղեց արտադրության մակարդակը կապիտալիստական յերկրներում: Ճղնժամի պատճառով կապիտալիստական յերկրներում տեղի յն ունենում արտադրա-

կան ապարատի զլալի մահացում, ձեռնարկությունների թերաբեռնում և փակում, ինչպես որինակ՝ Գերմանիայում ծանր ինդուստրիայի արտադրանքի մահացումը կազմում է 65 տոկոս, ՀԱ Միացյալ Նահանգներում 85 տոկոս: Արտադրողական ուժերի և նյութական արժեքների վոչնչացումը, մի շարք կոնցերների անանկացումը, կապիտալիզմի մինչև այժմ «լավագույն» ձեռնարկությունների (Ֆորդ) քայքայումն ու բարոյալքումն առաջ է դնում ամբողջ թափով: Այս է կապիտալիզմի վերջին չորս տարվա դարացման հանրագումարը:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՃՈՒՆ ՎԵՐԵԼՔԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՃԳՆԱՅԱՄԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մի կողմից ինդուստրիայի արագ աճումը և մյուս կողմից՝ կուլակություն, վորպես դասակարգի, վերացման քաղաքականության հաջող կիրառումը, հնարավորություն տվին տրակտորներ ու գյուղատնտեսական նորագույն մեքենաներ հայթայթել գյուղատնտեսությանը, միացնել մանր անհատական գյուղացիական տնտեսությունները, վերածելով նրանց խոշոր կոլեկտիվ տնտեսությունների և կազմակերպել հացահատիկային ու անասնաբուծական խորհանդեսությունների լայն ցանց:

Հնգամյակի շրջանում գյուղատնտեսությանը հանձնվեց՝ ա) ավելի քան 120 հազար նոր տրակտոր՝ 1900 հազար ձիու ուժով, բ) 1600 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենա, վորն ավելի քան կրկնապատկեց գյուղատնտեսության մեքենայինյաժությունը, համեմատած 1928 թվականի հետ, մասնավորապես, յիթի նկատի ունենալով ժամանակակից բարդ մեքենաների ու տրակտորային քաղող ուժի մեծ չափով ավելանալը:

Վերջին չորս տարում կազմակերպվեց 2446 մեքենատրակտորային կայան, վորոնք գինյաժ են աշխատանքի ժամանակակից դործիքներով, նորոգման արհեստանոցներով, ավիոմոբիլներով և այլն:

Վերջին յերեք տարում կազմակերպվեց ավելի քան 200 հազար կոլեկտիվ տնտեսություն, վորոնք ընդգրկում են գյուղացիական տնտեսությունների ավելի քան 60 տոկոսը և գյուղացիական բոլոր ցանքերի տարածության մոտ 75 տոկոսը:

Նույն ժամանակաշրջանում կազմակերպվեց 5000 խորհանդես-

առաջին (հացահատիկային, անասնաբուծական և տեխնիկական մշակույթների), ընդ վերջում կոլտնտեսությունները խորհրդանշանաբանության հետ միասին ընդգրկում են ցանքերի ամբողջ տարածության մոտ 80 տոկոսը:

Դրա չնորհիվ՝

ա) Զախվալեց կուլակությունը, խարխլեցին կապիտալիզմի արժանները գյուղատնտեսության մեջ և դրանով իսկ ապահովեց սոցիալիզմի հաղթանակը բոլորում, իսկ կոլեկտիվ տնտեսությունները վերածվեցին սոցիալիստական շինարարության ամուր հենարանի:

բ) Լուծվեց պատմական խնդիրը՝ մանր, անհատական ցիրուցան գյուղացիական տնտեսություն փոխադրումը սոցիալիստական խոշոր հողատիրության ուղիների վրա, և ԽՍՀՄ-ն մանր գյուղացիական յերկրից վերածվեց ամենախոշոր հողատիրության յերկրի:

գ) Ծանրերի տարածությունն ավելացավ 21 միլիոն հեկտարով՝ համեմատած 1927—28 տարվա տարածության հետ, ընդ վերջում չնայած վերջ չափով թերակատարվել են հեղամյակի ուրվագծերը հացաբույսերի ցանքերի աճման նկատմամբ, տեխնիկական մշակույթների պլանը զգալի չափով գերակատարվեց: 1932 թվականին տեխնիկական մշակույթների ցանքերի տարածությունը հասավ 15 միլիոն հեկտարի՝ հանդես 11 միլիոն հեկտարի, վոր նախագծել էր հեղամյակը 1932—33 տարվա համար:

դ) Դյուղատնտեսության վերելքի հիման վրա մեծ չափով աւելացավ ապրանքային հացի քանակը յերկրում: Փոխանակ 1927—28 տարում պետությունը հանձնված 700 միլիոն փութ հացահատիկի, վորից միայն տասը տոկոսը կազմում էր կոլտնտեսությունների ու խորհրդանշանությունների հացահատիկը, 1931—32 տարում պետությունը հանձնվեց 1400 միլիոն փութ հաց, վորից կոլտնտեսությունների ու խորհրդանշանությունների ապրանքային հացահատիկը կազմում էր արդեն առնվազն 75 տոկոս:

յ) Չնայած անասնաբուծությունն ընդհանուր առմամբ չաքունակում է հետ մնալ պլանի ուրվագծերից, անասնաբուծության սոցիալիստական հատվածն աճեց մի քանի տասնյակ անգամ՝ համեմատած 1928 թվականի հետ, գերազանցելով հեղամյակի բոլոր ուրվագծերը, չնորհիվ կոլտնտեսական ֆերմաների կազմալուծման և անասնաբուծական տնտեսություններում անասունների

թվի ավելացման: Միմիայն խոշոր խորհրդանշանություններում և ապրանքային ֆերմաներում 1932 թվականի վերջերին կար 7,6 միլիոն գլուխ խոշոր անասուն (խորհրդանշանություններում՝ 2,1 միլիոն գլուխ և կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում՝ 5,5 միլիոն գլուխ)՝ 1928 թվականի 332 հազար գլխի դիմաց: Ուղերի թվը միմիայն խոշոր խորհրդանշանություններում և ապրանքային ֆերմաներում 1932 թվականի վերջերին կազմում էր 3,6 միլիոն գլուխ (խորհրդանշանություններում՝ 950 հազար գլուխ, և ապրանքային ֆերմաներում՝ 2,6 միլիոն գլուխ): 1928 թվականի 75 հազար գլխի դիմաց: Վոչխարների ու ալծերի թվը միմիայն խոշոր խորհրդանշանություններում և կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում 1932 թվականի վերջերին կազմում էր 9,9 միլիոն գլուխ (խորհրդանշանություններում՝ 4,4 միլիոն գլուխ, և ապրանքային ֆերմաներում՝ 5,6 միլիոն գլուխ)՝ հանդես 1928 թվականի 970 հազար գլխի:

Միանգամայն այլ պատկեր է ներկայացնում գյուղատնտեսությունը կապիտալիստական յերկրներում:

Մինչդեռ ԽՍՀՄ-ում գյուղատնտեսությունը վերելք է ապրում, կապիտալիստական յերկրներում վերջին յերեք տարում, գյուղատնտեսություն մեջ դյուրություն ունի դաժան ճգնաժամ ու արտադրության կատաստրոֆիկ անկում:

Հացաբույսերի ցանքերի տարածությունը կրճատվել է 8—10 տոկոսով, բամբակի ցանքերը, որինակ՝ Ամերիկայում, ավելի քան 15 տոկոսով, շաքարի ճակնդեղինը, որինակ՝ Գերմանիայում, Ձերխոշովակիայում՝ 22—30 տոկոսով, վուչի ցանքերը, որինակ՝ Լիտվայում և Լատվիայում՝ 25—30 տոկոսով:

Մեծ չափով կրճատվում է գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը և սպառումը՝ ՀԱ Միացյալ Նահանգներում՝ 83 տոկոսով, համեմատած 1929 թվականի հետ, Գերմանիայում՝ 72 տոկոսով, համեմատած 1928—29 տարվա հետ, Լեհաստանում գրեթե բոլորովին դադարեցված է գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը:

Արագ թափով ծավալվում է գյուղացիական ու ֆերմերական տնտեսությունների քայքայումը, նրանց պարտքերը և նրանց դուլքի աճուրդահանումը: Պաշտոնական տվյալներով վաճառվել են գյուղացիական տնտեսություններ՝ ՀԱ Միացյալ Նահանգներում

բում 1929 թվականին 45 հազար, 1932 թ.՝ 150 հազար, Գերմանիայում՝ 1928 թ.՝ 10 հազար, 1931 թ.՝ 18 հազար:

Այս և գյուղատնտեսության զարգացման հանրազուգումը կապիտալիստական յերկրներում:

3. ԳԱՂԱՔԻ ՈՒ ԳՅՈՒՂԻ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ՝ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՃԳՆԱԺԱՄԻ ՈՒ ԱՆԿՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ընդունարացման հաջողությունները և կոլտնտեսական շինարարության աճումն ամրապնդեցին բանվոր դասակարգի արտադրական զուգումը կոլտնտեսական գյուղացիության հետ և վերջնականապես հաստատեցին այդ զուգումը, վորպես քաղաքի և գյուղի զուգման հիմնական ձևը: Այդ վճռական հանգամանքը չեն հաղաթել կուսակցության աջ ուղորտունիստական տարրերը: Սակայն միմիայն անուղղելի «ձախերը» կարող են պնդել, թե դրանով իսկ օրակարգից հանվում և քաղաքի և գյուղի զուգման առևտրական ձևն ամրացնելու հարցը, կարող են թերադնահատել տնտեսական ու քաղաքական այն նշանակությունը, վորն ունի լայն սպառման ապրանքների արտադրության հետագա ընդարձակումը, նրանց շուկայական ֆոնդերի ամեն կերպ ավելացումը և ապրանքաշրջանառության ծավալումը՝ բանվորներին ու կոլտնտեսականներին արդյունաբերական ապրանք հայթայթելու գործն ռաժեղացնելու համար:

Սոցիալիստական տարրերի բացարձակ գերակշռումը ժողովրդական տնտեսության մեջ, առևտրից մասնավոր կապիտալիստական տարրերի դուրս մղումը և արտադրական կապի ամրացումը նոր, ավելի բարձր աստիճանի հասցրին զուգման առևտրական ձևը, հասցրին խորհրդային առևտրի այնպիսի աստիճանին, յերբ թե՛ քաղաքում և թե՛ գյուղում ապահովված և պետական, կոոպերատիվ, ինչպես և կոլտնտեսական առևտրի տիրապետող դիրքը և սխտեմատիկ պայքար և մղվում առևտրից սպեկուլյացիան արմատախիլ անելու համար:

Վորպես հնգամյակի արդյունք, մենք ունենք՝

ա) թեթև արդյունաբերության արտադրանքի ավելացումը, վորը հասել և 187 տոկոսի՝ համեմատած 1928 թվականի հետ:

բ) մանրածախ կոոպերատիվ՝ պետական ապրանքաշրջանառության աճումը, վոր կաղմում և այժմ 39,9 միլիարդ ռուբլի, 1932 թվականի դեկտմբ, այսինքն՝ մանրածախ առևտրի ապրանքային մասսան՝ համեմատած 1928 թվականի հետ ավելացել և 175 տոկոսով:

գ) սնտական՝ կոոպերատիվ առևտրական ցանցի ընդարձակվելը 158 հազար խանութով՝ համեմատած 1929 թվականի հետ:

դ) շարունակ ավելի յն ծավալվում կոլտնտեսական առևտուրը և գյուղատնտեսական ապրանքների մթերումն առանձին պետական ու կոոպերատիվ կաղմակերպությունների կողմից:

Միանգամայն այլ պատկեր և ներկայացնում ապրանքաշրջանառության գրությունը կապիտալիստական յերկրներում, վորտեղ ճգնաժամի հետևանքը յեղավ առևտրի կառուսարոքի կրճատումը, ձեռնարկությունների մասսայական փակումը և մանր ու միջակ առևտրականների քայքայումը, խոշոր առևտրական ֆիրմաների սնանկացումը և ապրանքները կուտակումն առևտրական ձեռնարկություններում, յերբ շարունակում և նվազել աշխատավոր մասսաների գնողունակությունը:

4. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՃՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ՝ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԾԱՎԱԼՄԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՆԿՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Արդյունաբերության ու գյուղատնտեսության անչեղ վերելքը ԽՍՀՄ-ում վորոչեցին յերկու հիմնական փաստեր:

1. Գործադրկության վոչնչացումը և վաղվա որվա նկատմամբ անվտանգության վերացումը բանվորների մեջ:

2. Գրեթե վողջ չքավորության ընդդրկումը կոլտնտեսային շինարարության մեջ, այդ հիման վրա՝ գյուղացիության ունեոր ու չունեոր խավերի շերտավորման և գյուղում աղքատացման ու պառպերկոմի վերացումը:

Բանվորների ու գյուղացիների նյութական գրության բարելավման ասպարիզում մեր ձեռք բերած այդ հիմնական նվաճումների շնորհիվ մենք առաջին հնգամյակում ունենք՝

ա) բանվորների ու ծառայողների թվի կրկնապատկվելը ար-

գյուղաբերութեան մեջ՝ համեմատած 1928 թվականի հետ, վորը տալիս է հնգամյակի պլանի գերակատարում 57 տոկոսով:

բ) Ժողովրդական յեկամտի, ներառյալ նաև բանվորների ու գյուղացիների յեկամուտների աճումը, վորը 1932 թվականին հասել էր 45,1 միլիարդ ռուբլու, վորը տալիս է 85 տոկոս աճում՝ համեմատած 1928 թվականի հետ:

գ) խոշոր արդյունաբերութեան բանվորների ու ծառայողների տարեկան միջին աշխատավարձի աճումը 67 տոկոսով՝ համեմատած 1928 թվականի հետ, վորը տալիս է հնգամյակի գերակատարում 18 տոկոսով:

դ) սոցիալական ապահովագրութեան ֆոնդի ավելանալը 292 տոկոսով՝ համեմատած 1928 թվականի հետ (4120 միլիոն ռուբլի 1932 թվականին՝ հանդէպ 1928 թվականի 1050 միլիոն ռուբլու), վոր տալիս է հնգամյա պլանի գերակատարում 111 տոկոսով:

յե) հանրային սննդի աճումը, վորն ընդգրկում է արդյունաբերութեան վճռական ճյուղերում աշխատող բանվորների ավելի քան 70 տոկոս, մի աճում, վորը տալիս է հնգամյակի գերակատարումը վեց անգամ:

զ) արդյունաբերութեան անցնելը 7-ժամյա բանվորական օրվա, վորն ընդգրկում է բանվոր դասակարգի գերակշռող մեծամասնութիւնը:

Կատարելապէս այլ պատկեր է ներկայացնում բանվորների ու գյուղացիների գրութիւնը կապիտալիստական յերկրներում:

Կատաստրոֆիկ կերպով ավելացել է գործազուրկների թիվը: ՀԱ Միացյալ Նահանգներում, պաշտոնական տվյալների համաձայն, միմիայն մշակող արդյունաբերութեան մեջ զբաղված բանվորների թիվը, վորը 1928 թվականին կազմում էր 8,5 միլիոն հոգի, 1932 թվականին իջավ 5,5 միլիոն հոգու: Իսկ Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի տվյալներով՝ գործազուրկներին թիվը ՀԱ Միացյալ Նահանգների ամբողջ արդյունաբերութեան մեջ 1932 թվականի վերջերին կազմում էր 12 միլիոն: Անգլիայում պաշտոնական վիճակագրութեան տվյալներով, գործազուրկների թիվը 1928 թվականի 1290 հազար հոգուց 1932 թվականին հասել էր 2,8 միլիոն հոգու: Գերմանիայում, պաշտոնական տվյալներով, գործազուրկների թիվը 1928 թ. 1376 հազար հոգուց 1932 թվին հասել էր 5,5 միլիոն հոգու: Նույնպիսի պատկեր էնք տեսնում կապիտալիստական բոլոր յերկրներում, ընդ վորում Ազգերի Լիգային

կից Աշխատանքի Միջազգային Բյուրոյի բացահայտորեն նվազեցրած տվյալներով, գործազուրկների թիվը կապիտալիստական յերկրներում (առանց Չինաստանի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի և Կորեայի) արդեն 30 միլիոն հոգուց ավելի յե:

Միստեմատիկաբար իջեցվում է բանվորների աշխատավարձը՝ Պաշտոնական տվյալներով ամսական միջին աշխատավարձի իջեցումը ՀԱ Միացյալ Նահանգներում հասել է 35 տոկոսի, համեմատած 1928 թվականի մակարդակի հետ, Անգլիայում՝ 15 տոկոսով՝ նույն ժամանակամիջոցում, իսկ Գերմանիայում նույնիսկ 50 տոկոսով:

Չգալի չափով կրճատվել են բանվորների ապահովագրութեան առանց այն ել անշա՛ն ֆոնդերն Անգլիայում ու Գերմանիայում: ՀԱ Միացյալ Նահանգներում և Ֆրանսիայում միանգամայն բացակայում է, կամ համարյա բացակայում է գործազուրկների ապահովագրման վորէն ֆոնդ, վորով վիթխորի չափով աճում է անտուն բանվորների և անապաստան յերեխաների թիվը, մանաւմանդ ՀԱ Միացյալ Նահանգներում:

Ավելի լավ վիճակի մեջ յեն գյուղացիական մասսաները կապիտալիստական յերկրներում: Գյուղատնտեսական ճգնաժամին արմատապէս քայքայում է գյուղատնտեսութիւնը և թափառական է դարձնում միլիոնավոր քայքայված գյուղացիների ու ֆերմերներին: Բավական է, յեթե մատնանշենք, վոր ՀԱ Միացյալ Նահանգներում, պաշտոնական տվյալներով, միջակ ֆերմերի տարեկան յեկամուտը վերջին յերեք տարվա ընթացքում՝ 1929 թվականի 847 դոլլարից 1932 թվականին իջավ 187 դոլլարի:

5. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՐԱԶԱՅԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՏՆԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ԱՃՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ՝ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՏՆԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ԱՆԿՄԱՆ ՅԵՎ ՏՐՄԱՆ ԱՌԿԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ժողովրդական տնտեսութեան աճմանը և աշխատավոր մասսաների բարեկեցութեան վերելքին ուղեկցում էր միաժամանակ կուլտուրական բաղայի ընդարձակումը և տեխնիկական կադրերի արագ աճումը ԽՍՀՄ-ում:

ԽՍՀՄ-ի տարրական դպրոցներում սովորողների թիվը 1928 թվականի տասը միլիոն հոգուց 1931 թվականին հասել էր 19

միլիոն հոգու: Այլարարում է տարրական պարտադիր ուսման մուծումը: Աղքատակության դրազիտությունը 1930 թվականի 67 տոկոսից 1932 թվականին հասել էր 90 տոկոսի:

Հանրակրթական միջնակարգ դպրոցներում սովորողների թիվը 1928 թվականի 1600 հազար հոգուց 1932 թվականին հասել էր 4350 հազար հոգու: Տեխնիկումներում ու բանֆակներում սովորողների թիվը 1928 թվականի 264 հազար հոգուց 1932 թվականին հասել էր 1437 հազար հոգու:

ԲՈՒՀ-երում սովորողների թիվը 1928 թվականի 166 հազար հոգուց 1932 թվականին հասել էր 500 հազար հոգու:

Գիտական-հետազոտական ինստիտուտների թիվը 1928 թվականի 224-ից 1932 թվականին հասել էր 770-ի, իսկ գիտական աշխատողների թիվն ավելացավ յերկու անգամ:

Միևեռյան ժամանակ կապիտալիստական յերկրներում փակվում են բարձրագույն ուսումնական հաստատությունները և դեռ տական ինստիտուտները, աճում է տեխնիկական կայրերի դուրժադրկությունը և նրանց ապավորակավորումը, ԲՈՒՀ-երն ավարտողների մեծ մասը հնարավորություն չունի վուճ միայն դուրժ գտնել ըստ իր մասնագիտության, այլև առհասարակ աշխատանք գտնել, վորի պատճառով նվազում է ուսանողների հասանքը դեպի բարձրագույն ուսումնական հաստատությունները և կապիտալը հարկադրված կորչում է իր հրամանատարական կադրերը (Ծորդ): Այլևի ու ավելի մեծ չափով են տարածվում այն «տնտեսությունները», թե գիտության ու տեխնիկայի առաջագիտությունն ավելորդ է: Տեղի յե ունենում գիտական մտքի հետադիմումը:

Ե. ՔԱՂԱՔԻ ՈՒ ԳՅՈՒՂԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԸ  
ԶԱՆԶԱՆԱԿՑԻՆ, ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՀԻՄՔԸ  
ԿԱՌՈՒՑՎԵՑ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՑՄԻ ՀԱՂԹԱՆԱԿՆ ԱՊԱՀՈՎԿԵՑ  
ԽՍՀՄ-ՈՒՄ

ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը հնգամյակը հաղթականորեն ավարտեց չորս տարում, կուսակցության ղեկավարությամբ անող դուր պայքար մղելով դասակարգային թշնամու դեմ, ճնշելով նրա ամենախորք գիմադրությունը: Սոցիալիստական ինդուստրիայի աճմամբ, հացահատիկային հիմնական շրջաններում համատարած կոլեկտիվացման ծավալմամբ և կուլակության վորպես դասակար-

գի վերացման քաղաքականությանն անցումով, լուծվեց հիմնական «ով-ում» հարցը, և լուծվեց հոգուտ սոցիալիզմի, ընդդեմ քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի:

Կուսակցությունը կարողացավ իրականացնել հնգամյակի հաղթական ավարտումը չորս տարում, պայքար մղելով հիմնական դիմն անշեղորեն ու հետևողականորեն կիրառելու համար, պայքար մղելով աջ սպորտունիզմի, վորպես դիվալոր վտանգի դեմ, պայքար մղելով «ձախ» խոտորումների ու հակահեղափոխական տրոցկիզմի դեմ, անողորքարար ջախջախելով ամեն տեսակ հակակուսակցական խմբավորումները, վճռաբար մերկացնելով գրգռանում կուստոմս ունեցող դասակարգային թշնամու գործադիմներին և բուրժուական այլասերվածներին:

Կուսակցությունն իրականացրեց հնգամյակի հաղթական ավարտումը, լայն մասսաների ստեղծագործական ակտիվության ու արտադրական նախաձեռնության անշեղ աճման հիման վրա, ներգրավելով ավելի ու ավելի մեծ թվով բանվորներ ու կուլտուրականներ սոցիալիստական շինարարության հարվածայինների շարքերը, ծավալուն սոցմրցման հիման վրա:

Սակայն իր լիակատար ուժը պահպանում է այն նշանակությունը, վորն ունի ԱՄ-ը կուսկոնֆերանսի այն ցուցումը, թե սոցիալիստական արշավի հաջողությունն անխուսափելիորեն առաջ է բերում դասակարգային պայքարի սրումը նոր ձևերով առանձին շրջաններում և սոցիալիստական շինարարության առանձին ճակատամարտում: Այն հանգամանքը, վոր վերջին ժամանակներս դասակարգային թշնամին ԽՍՀՄ-ի միջանի շրջաններում ավելի ուժեղ փորձեր է անում սողոսկել կուլտուրսությունների ու խորհտնտեսությունների ղեկավարության մեջ և այնտեղ կազմալուծել աշխատանքը, վնասարարություն կատարելով կուլտնտեսություններում ու խորհտնտեսություններում և սարսափ կազմակերպելով պետության առաջադրանքների նկատմամբ, — այդ հանգամանքն ավելորդ անդամ վկայում է, վոր հեղափոխական ղեկաւորությունը և դասակարգային թշնամուն ջախջախելու պատրաստակամությունը պետք է հանդիսանա կոմունիստի հիմնական պատվիրանը և դիվալոր նախադրյալը մեր հեղաղա առաջընթացի համար:

## 7. ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԴԵՊՈՒ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԸ

Առաջին հնգամյակը յեղել է նոր դործարանների շինարարության հնգամյակ, դործարաններ, վորոնք ներկայացնում են արդյունաբերության նոր տեխնիկական բազա ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերահասույցելու համար, հողագործաբայան մեջ նոր ձևանարկությունների՝ կոլանտեսությունների ու խորհրդանտեսությունների շինարարության հնգամյակ, վորոնք լծակ են հանդիսանում ամբողջ ժողովրդատնտեսությունը սոցիալիզմի հիմունքներով կազմակերպելու համար:

Այստեղից է բղխում մեր թեքումը դեպի նոր շինարարությունը, նոր շինարարության պաֆուրը, վորպես առաջին հնգամյակի առաջին բնորոշ դիմը:

Սակայն արդյունաբերության ասպարիզում նոր ձևանարկությունների շինարարությունը, ինչպես և դյուղատնտեսության ասպարիզում, կատարվում է գլխավորապես արդյունաբերության արդեն գոյություն ունեցող հին կամ նորոգված ձևանարկությունների ոգտադործումով, ձևանարկություններ, վորոնց տեխնիկան արդեն յուրացված է և վորոնց ոգտադործումը դժվարություններ չի ներկայացնում:

Այստեղից բղխում է արդյունաբերության հին և նորոգված ձևանարկությունների հսկայական տեսակարար էջիւր պատրաստի արտադրանք արտադրելու դործում, ինչպես նաև արդյունաբերական արտադրանքի աճման ալիկի արագ տեմով ընդունելու հնարավորությունը, վորպես առաջին հնգամյակի յերկրորդ բնորոշ դիմը:

Այլ կերպ է լինելու դործը յերկրորդ հնգամյակում: Ի տարբերություն առաջին հնգամյակի՝ յերկրորդ հնգամյակը հանդիսանալու յետադիմ արդյունաբերության նոր ձևանարկությունների յուրացման հնգամյակ, դյուղատնտեսության մեջ նոր ձևանարկությունների՝ կոլանտեսությունների ու խորհրդանտեսությունների կազմակերպչական ամրացման հնգամյակ, վորն, իհարկե, չի բացառում, այլ յենթադրում է նոր շինարարության հետագա դարգացումը: Այդ նշանակում է, վոր յերկրորդ հնգամյակը, յիթե նա ուղում է լուրջ հաղորդություն ձևող բերել, պետք է լրացնի մեր շինարարաբայան ներկա լողունը նոր լողունով՝ յուրացնել նոր ձևանարկությունները և նոր տեխնիկան:

Սակայն նոր ձևանարկությունների և նոր տեխնիկայի յուրացումն ալիկի մեծ դժվարություններ և ներկայացնում, քան հին և նորոգված այն դործարանների ոգտադործումը, վորոնց տեխնիկան արդեն յուրացված է: Անհրաժեշտ էլինի ալիկի շատ ժամանակ դործադրել, վորպեսզի բարձրացնենք բանվորների ու ինժեներատեխնիկական կազմի վորակը և նոր տնակություններ ձևող բերենք նոր տեխնիկան լրիվ ոգտադործելու համար:

Դրանից հետևում է, վոր յերկրորդ հնգամյակի շրջանում արդյունաբերական արտադրանքի աճման բնագավառում գերակշռող դերը պատկանելու յե վոչ թե հին, այլ նոր ձևանարկություններին, վորոնց տեխնիկան դեռ պետք է յուրացնել, մի հանդամանք, վորը չի կարող վորոչ չափով շխուլացնել արդյունաբերական արտադրանքի աճման տեմպը՝ համեմատած առաջին հնգամյակի տեմպի հետ:

Այստեղից բղխում է արդյունաբերական արտադրանքի աճման ալիկի նվազ տեմպի անհրաժեշտությունը յերկրորդ հնգամյակում, առնվազն նրա առաջին յերկու կամ յերեք տարիների համար:

Այդ կարպեցությունամբ կենտեմի ու կվՀ-ի միացյալ պլինումը դանում է, վոր՝

ա) արդյունաբերական արտադրանքի տարեկան միջին աճումը յերկրորդ հնգամյակի համար պետք է նախադմի վոչ թե 21—22 տոկոսով, ինչպես տեղի ունեցավ առաջին հնգամյակում, այլ քի պակաս, մոտ 13—14 տոկոսով:

բ) գլխավոր ջանքը պետք է կենտրոնացվի վոչ թե արտադրանքի քանակական աճման վրա, այլ արտադրանքի վորակի բարելավման և արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության աճման վրա, վոչ թե ցանքերի տարածության ընդարձակման վրա, այլ հողագործության մեջ բերքատվության բարձրացման և դյուղատնտեսության մեջ աշխատանքի վորակի բարելավման վրա:

## II. ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՏՄՐՎԱ (1933 Թ.)

### ԺՈՂՈՎՐԴՄԱՆՏԵՍԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Առաջին հնգամյակի արդյունքները լիակատար հնարավորություն են տալիս դպալի չափով դարգացնելու ժողովրդական տնտեսությունը 1933 թվականին՝ յերկրորդ հնգամյակի առաջին տարում:



Յեւնելով դրանից՝ Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը վերջում է՝

1. Արդյունաբերության արտադրանքի 1933 թ. տնումը՝ համեմատած 1932 թ. հետ՝ ընդունել 16,5 տոկոս, զորից «Ա» խմբինը՝ 21,2 տոկոս, «Բ» խմբինը՝ 10,5 տոկոս:

2. Սահմանել արտադրական պարտադիր առաջադրանքների հետևյալ չափն արդյունաբերության կարևորագույն ճյուղերի համար՝

ա) էլեկտրոններգիայի արտադրումը՝ 16300 միլիոն կիլովատ ժամ:

բ) սև մետաղաձուլում՝ 9 միլիոն տոնն թուջ և 6,2 միլիոն տոնն մամլած յերկաթ:

գ) ածուխ՝ 84 միլիոն տոնն և նավթ՝ 24,4 միլիոն տոնն:

դ) մեքենայինություն՝ 6,5 միլիարդ ուուրլի՝ 1926—27 թ.թ. գներով:

յ) քիմիական արդյունաբերություն՝ 1839 միլիոն ուուրլի՝ 1926—27 թ.թ. գներով:

զ) թեթև արդյունաբերություն՝ 8,8 միլիարդ ուուրլի՝ 1926—27 թ.թ. գներով:

է) սննդարդյունաբերություն (Մատոցկոմատ և ԱՊՈ-ին կից մթերումների կոմիտե)՝ 7,7 միլիարդ ուուրլի՝ 1926—27 թ. թ. գներով:

ը) անտառարդյունաբերություն՝ 2,072 միլիոն ուուրլի՝ 1926—27 թ.թ. գներով:

թ) արհեստագործական կոոպերացիա՝ 7920 միլիոն ուուրլի՝ 1932 թվականի պլանային գներով:

3. Գյուղատնտեսության ասպարիզում 1933 թվականի համար ընդունել դարնանացանի տարածությունը 95 միլիոն հեկտար, զորից աշնանացան հացարույսերինը՝ 38,5 միլիոն հեկտար, դարնանացան հացարույսերինը՝ 63,1 միլիոն հեկտար, հաշվելով բոլոր հացարույսերի միջին բերքատվությունը 8 ցենտներ մի հեկտարին, բամբակինը՝ 2067 միլիոն հեկտար, հաշվելով վոտովոզ տարից, բամբակինը՝ 2067 միլիոն հեկտար, հաշվելով միջին բերքը՝ 1,2 միլիոն հեկտար, հաշվելով միջին բերքը 100 ցենտներ մի հեկտարից, վոշինը՝ 2,3 միլիոն հեկտար, հաշվելով միջին բերքը 2,4 ցենտներ մի հեկտարից:

ՄՏԿ-ների թիվը հասցնել 2768:

Անասունների թիվը սկետական անասնաբուծական միավորումներում և կոլտնտեսական ֆերմաներում հասցնել՝ խոշոր յիզիքավոր անասուններինը՝ խորհանտեսություններում 2,550 հազար գլխի, ապրանքային ֆերմաներում՝ 6000 հազար գլխի, կովերի թիվը խորհանտեսություններում՝ 1,162 հազար գլխի, ապրանքային ֆերմաներում՝ 2500 հազար գլխի, խոզերի թիվը խորհանտեսություններում հասցնել 1150 հազար գլխի, ապրանքային ֆերմաներում՝ 3750 հազար գլխի: Վոշխարների թիվը խորհանտեսություններում հասցնել 4840 հազար գլխի, ապրանքային ֆերմաներում՝ 6205 հազար գլխի:

4. Յերկաթուղում բեռնաչըջանաբերության չափը 1933 թվականի համար ընդունել 300 միլիոն տոնն, իսկ որական բեռնման չափը՝ 58,000 վագոն:

5. Համաձայն արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության արտադրական առաջադրանքների չափին, ժողովրդական տնտեսության 1933 թ. հիմնական ներդրումն ընդունել 18 միլիարդ ուուրլի, զորից արդյունաբերության մեջ՝ 10,109 միլիոն ուուրլի՝ փոխանակ անցյալ տարվա 9164 միլիոն ուուրլու: Այդ թվից «Ա» խմբինը՝ 8527 միլիոն ուուրլի, «Բ» խմբինը՝ 1582 միլիոն ուուրլի: Տրանսպորտի հիմնական ներդրումներն ընդունել 2976 միլիոն ուուրլի, գյուղատնտեսությանը՝ 2148 միլիոն ուուրլի:

6. Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը 1933 թ. պլանի կարևորագույն խնդիրներից մեկն է համարում աշխատանքի (трудоемкий) աշխատանքների մեքենայացումը (տեխնիկական մշակույթներ, ածուխ, փայտ, տորֆ, բեռներու և պարպելու աշխատանքը և այլն): Կենտկոմի ու ԿՎՀ-ի պլենումն առաջարկում է ՄՍՀԽ-ի Ժողկոմխորհին և կուսակցական ու խորհրդային բոլոր կազմակերպություններին՝ մշտապես վերահսկել պլանում նախատեսված մեքենայացման ու համապատասխան սարքավորման արտադրության առաջադրանքների լրիվ կատարմանը:

7. Աշխատանքի արտադրողականության բարձրացման և խնայարժեքի իջեցման բնագավառում 1933 թվականին՝ համեմատած 1932 թվականի հետ, ընդունել՝

ա) աշխատանքի արտադրողականության բարձրացումն արդյունաբերության մեջ 14 տոկոսով:

բ) խնայարժեքի իջեցումն արդյունաբերության մեջ 3,9 տոկոսով:

դ) ինքնարժեքի իջեցումը չինարարության մեջ 15 փոկոտով և  
Հոկայական նշանակություն տալով վորակական ցուցանիշ-  
ների համար մղվող պայքարին, վորոնց ամեն մի թերակատարում  
հնդվածք և ստեղծում կուտակման գործում և բեռ և դառնում  
պետբյուջեի համար, և մատնանշելով, վոր անցյալ տարի միջանի  
հյուղերում թերակատարվել են վորակական ցուցանիշների առա-  
ջադրանքները, իսկ յերբեմն նաև դրությունը վատացել և՛ հա-  
մեմատած անցյալ տարվա հետ, — Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ  
պլենումն առաջարկում և բոլոր տնտեսական, կուսակցական ու  
արհմիութենական կազմակերպություններին՝ 1933 թվականին  
գլխավոր ուշադրությունը կենտրոնացնել աշխատանքի արտա-  
դրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման առաջա-  
դրանքների լրիվ կատարման վրա, առաջադրանքներ, վորոնց ի-  
րականացումն առաջին հերթին հաշվի յն առնվելու յուրաքանչյուր  
ձեռնարկության ու արեստի գործունեյությունը գնահատելիս:

8. Աշխատավորների նյութական ու կուլտուրական մակար-  
դակն է՛լ ավելի բարձրացնելու նպատակով Կենտկոմի ու ԿՎՀ-ի  
միացյալ պլենումը վորոշում է՝

ա) կոմունալ տնտեսության հիմնական ներդրումների չափն  
ընդունել 696 միլիոն ուրլի և բնակարանային չինարարության  
հիմնական ներդրումների չափը՝ 1472 միլիոն ուրլի:

բ) աշխատավորների սոցիալ-կուլտուրական կարիքների սպա-  
ռարկման ծախսերի ընդհանուր չափը (սոցալ, լուսավորություն,  
շահույթներից կուլտուրական ու բնակարանային չինարարության  
հատկացվող տոկոսները, գործուս և այլն) ընդունել 11.616 միլիոն  
ուրլի, վորը կազմում է 19,8 տոկոս աճում՝ համեմատած 1932  
թվի ծախսերի հետ:

գ) ամբողջ Ժողովրդական տնտեսության մեջ աշխատավարձի  
աճումը 1933 թվականի համար ընդունել 6,8 տոկոս, համեմատած  
1932 թվականի աշխատավարձի միջին տարեկան մակարդակի  
հետ, իսկ արդյունաբերության մեջ՝ 9 տոկոս:

9. Պետական բյուջեն ընդունել՝ յեկամային մասում՝ 34.689  
միլիոն ուրլի, ծախսերի մասում՝ 33.169 միլիոն ուրլի, վորով  
յեկամուտները գերադանցում են ծախսերին 1520 միլիոն ուրլով:  
Պարտավորեցնել բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական  
կազմակերպություններին անպայման ապահովել՝

ա) բյուջետային և վարկային ամենախիստ կարգապահության  
պահպանումը թե՛ յեկամուտների և թե՛ ծախսերի նկատմամբ:

բ) տնտեսավարի անշեղ կիրառումը և տնտեսական որդան-  
ների միջև պայմանադրական կարգապահության պահպանումը:

գ) թույլ չտալ վորևե արտապլանային չինարարություն:

\*\*\*

1933 թվականի պլանը՝ վորպես յերկրորդ հնգամյակի առա-  
ջին տարվա պլանը՝ հանդիսանում է ԽՍՀՄ-ում սոցիալիստական  
հասարակության կառուցման գործի հետագա դարդացումը:

Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումը լրիվին համոզված և  
1933 թվականի պլանի հաջող կատարմանը: Պետական ձեռնար-  
կություններում և կոլտնտեսություններում աշխատանքի կազմա-  
կերպման հետագա ուժեղացումը, արտադրության տեխնիկայի  
խիշակա՛ն տիրապետումը, սոցիալիստական կարգապահության ար-  
մատացումը կոլտնտեսություններում, նրանց մեջ կոլտնտեսական  
ակտիվի ամրացումը և կուլակային աղբեցության արտահայտու-  
թյան դեմ պայքարելը, սոցմրցման ու հարվածայնության աճու-  
մը, — այս բոլորը պետք է հզոր լծակ դառնան 1933 թ. պլանի կա-  
տարման գործում:

Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումը կրկին մատնանշում և  
բոլոր կուսակցական կազմակերպություններին, վոր պլանի իրա-  
գործման համար կատարվող գործնական աշխատանքի ընթացքում  
անհրաժեշտ և ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել ընդունվող  
վորոշումների կատարման սխտեմատիկ ստուգման վրա, ինչպե-  
կուսակցական, այնպե՛ս էլ անկուսակցական կադրերի խիստ ընա-  
րության վրա, տնտեսական ղեկավարման բարելավման վրա:

1933 թ. պլանի հաջող կատարումը բոլոր կուսակցական  
պլաններից պահանջում է անողոք պայքար մղել կուսակցու-  
թյան քաղաքականության դեմ ուղղված դատակարգային թնամու-  
ղիմադրության բոլոր արտահայտությունների դեմ, ամրացնել  
կուսակցության շարքերի միասնությունը, վճռական հակահար-  
ված տալ հակակուսակցական բոլոր արամադրություններին,  
մաքել կուսակցությունն աշխատելից և կուսակցությունը խոր-  
թացած տարրերից:

Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումը կոչ և անում բոլոր

կուսակցական, խորհրդային և արհմիութենական կազմակերպու-  
թյուններին, բանվոր դասակարգին ու կուտնտեսական դյուղա-  
ցիությանը՝ մոբիլիզացիայի յանձնարելի իրենց ուժերը՝ լրիվ կա-  
տարելու ժողովրդական տնտեսության 1933 թվականի՝ յերկրորդ  
հնգամյակի առաջին տարվա պլանը:

## ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱ- ՔԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՆՂԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԳԻՐՆԵՐԸ

ՀԱՍ Կ(Բ)Կ ԿԿ-Ի ՅԵՎ ԿՎԶ-Ի ՄԻԱՅՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵԸ  
ԸՆԿ. ԿԱԳՆԱՊԿԻՁԻ ՁԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹՎ. ԸՆԴՈՒՆՎԱԾ 1933 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ

## I. ԳՅՈՒՂՈՒՄ ՏԱՐՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒԼՈՒ- ԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՈՒ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Դյուղատնտեսության հետագա վերելքի և նրա սոցիալիստա-  
կան վերակառուցումն ավարտելու համար մղվող պայքարը ներկա-  
յումս հանդիսանում է կուսակցության կարևորագույն խնդիրը:

Չբավոր-միջակ դյուղացիության հիմնական մասսաների կո-  
լեկտիվացումը, կուտնտեսությունների ագրադրական-տնտեսիկա-  
կան բաղադրի ընդարձակումը և խորհանտեսական շինարարության  
դարգացումը անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեցին դյուղա-  
տնտեսության հետագա վերելքի, ինդուստրացման միջոցային ու  
հումքային բաղադրի ամրապնդման և ինչպես կուտնտեսություննե-  
րի, այնպես էլ առանձին կուտնտեսականների յեկամտի անընդ-  
հատ աճման համար:

Այդ խնդիրների հաջող լուծմանը կատարի ընդգիմադրություն  
են ցույց տալիս դյուղի հակախորհրդային տարրերը: Տնտեսապես  
ջախջախված՝ բայց դեռ վերջնականապես իրենց ազդեցությունը  
չկորցրած՝ կուլակը, նախկին սպիտակ սպաները, նախկին տեր-  
տերները, նրանց վորդիները, կալվածատերերի ու շաքարի դո-  
ժարանաւորների նախկին կառավարիչները, նախկին ուրյադնիկ-  
ները և դյուղում նստած՝ բուրժուա-ազգայնական, և այդ թվում  
եսերական ու պետյուրովյան ինտելիգենցիայից դուրս յեկած՝  
հակախորհրդային այլ տարրերը, ամեն կերպ աշխատում են քա-  
ջայել կուտնտեսությունները, աշխատում են վիժեցնել կուսակ-

ցության ու կառավարության ձեռնարկումները դյուղատնտեսու-  
թյան բնագավառում, այդ նպատակով ոգտադործելով կուտնտե-  
սականների մի մասի անդիտակցությունն՝ ընդդէմ հանրային,  
կուտնտեսությունների շահերի, ընդդէմ կուտնտեսական դյուղա-  
ցիության շահերի:

Սոցիոկելով կուտնտեսության մեջ վորպես հաշվետարներ,  
տնտեսավարներ, պահեստապետներ, բրիգադիրներ և այլն, իսկ  
հաճախ նաև վորպես կուտնտեսության դեկավար աշխատողներ,  
հակախորհրդային տարրերը ձգտում են վնասարարություն կազ-  
մակերպել՝ փչացնում են մեքենաները, ցանում են չհերկված հո-  
ղամասերը, հախշտակում են կուտնտեսական բարիքը, խախտում  
են աշխատանքային դիսցիպլինան, կաղմակերպում են սերմացուի  
դոզություն, դադոնի սորտերներ, հացամթերումների տարրածո,  
իսկ յերբեմն նրանց հաջողվում է քայքայել խորհանտեսություն-  
ները:

Ոցկվելով խորհանտեսություն վորպես տնտեսավարներ,  
հաշվետարներ, դաշտավարներ, պահեստապետներ, բաժանմունքի  
վարիչներ և այլն, այդ հակախորհրդային տարրերը վնաս են  
հասցնում խորհանտեսական շինարարությանը՝ գիտավորյալ կեր-  
պով կոտրատելով տրակտորները, կոմբայնները, վատ մշակելով  
հողը, վատ խնամելով անասուններին, խախտելով աշխատանքա-  
յին դիսցիպլինան, հախշտակելով խորհանտեսական դուրքը՝ հատ-  
կապես նրա մթերքները (հացահատիկ, միս, կաթ, յուղ, բուրդ և  
այլն):

Այդ բոլոր հակախորհրդային և հակակուտնտեսային տար-  
րերը հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ՝ նրանք ձգտում  
են վերականգնել կալվածատերերի ու կուլակների իշխանություն-  
ներ՝ աշխատավոր դյուղացիության վրա, նրանք ձգտում են վերա-  
կանդնել ֆարբիկանտների ու դործարանատերերի իշխանություն-  
ներ՝ բանվորների վրա:

Կոմունիստներից և նրանց համակրող անկուսակցականներից  
հատուկ դժոխություն է պահանջվում՝ հակահարված կազմակեր-  
պելու այդ հակաժողովրդական տարրերի դեմ և ջախջախել նրանց  
միջև վերջ:

Մինչդեռ դյուղական կուսակցական և կոմյունիստական կադ-  
մակերպությունները՝ այդ թվում նաև խորհանտեսությունների  
ու ՄՏ կայանների բժիշկները, վորոնք հաճախ դուրկ են լինում հե-

